

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 276-Ա

4 սեպտեմբերի, 2020 թվական

**ՄԻ ՇԱՐՔ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) 2-րդ, 6-րդ, 7-րդ կետերով և Որոշման հավելվածի 7-րդ կետի 5-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) ղեկավարի՝ 2020 թվականի մայիսի 15-ի թիվ 40-Ա հրամանի հիման վրա իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնող ընկերությունների կողմից սպասարկվող երթուղիները սպասարկող ավտոտրանսպորտային միջոցների շահագործումը՝

1) «Երևանի ավտոբուս» ՓԲԸ՝ թիվ 3 ավտոբուսային երթուղի՝ 4529S, թիվ 5 ավտոբուսային երթուղի՝ 4433S, թիվ 15 ավտոբուսային երթուղի՝ 4110S և թիվ 20 ավտոբուսային երթուղի՝ 4634S և 4643S հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցներ,

2) «Ուղևորափոխադրող» ՍՊԸ՝ թիվ 26 ավտոբուսային երթուղի՝ 4837S, 4853S, 4845S հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցներ,

3) «Տիգրան» ՍՊԸ՝ թիվ 47 ավտոբուսային երթուղի՝ 4388S, 4390S և 4393S հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցներ,

4) «Դելյուքսե Տրանս» ՍՊԸ՝ թիվ 63 ավտոբուսային երթուղի՝ 4913S, 4916S և 4918S հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցներ:

2. 48 ժամով արգելել «Սաքխաչ» ՍՊԸ-ի կողմից սպասարկվող թիվ 58 ավտոբուսային երթուղում շահագործվող 4326S, 4335S, 2898S և 4339S ավտոտրանսպորտային միջոցների շահագործումը:

3. Տեսչական մարմնի ղեկավարի պարտականությունները ժամանակավոր կատարող Արտյուշ Գրիգորյանին՝ ապահովել վերոնշյալ ընկերությունների սույն որոշման մասին տեղեկացումը:

4. Ավտորանսպորտային միջոցների շահագործումը արգելվում է տեղեկացման պահից:

5. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-2-րդ կետերի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողություն:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 04/09/20 18:47:30 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ